

**Հ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2007Թ.
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ներկայումս կրթության բնագավառի գերակա խնդիրն է կրթության, որպես աղքատության հաղթահարման և հանրապետության սոցիալտնտեսական զարգացման հիմնական գործոններից մեկի, որակի բարձրացումը, ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Այս նպատակներից ելնելով հանրապետությունում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ, որոնք ներառում են կրթության բոլոր աստիճանները:

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում, համաձայն ՀՀ-ԵՄ համատեղ Գործողությունների Ծրագրով նախանշված առաջնայնությունների, 2007թ. ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված կրթության և գիտության ոլորտների բարեփոխումների շարունակականության ապահովմանը: 2007 թվականին մշակվել և ՀՀ կառավարության հաստատման է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված ՀՀ ԿԳ նախարարության գործունեության ծրագիրը: Հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների աստիճանական զարգացումն ու նախանշելով ոլորտի հետագա զարգացումների իրականացման գերակա ուղղությունները, մշակվել է «Կրթության զարգացման պետական ծրագրի» նախագիծը՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ԱՀՌԾ հիմնադրույթներին համապատասխան:

2007 թվականին շարունակվել են հանրակրթության ոլորտի համակարգային բարեփոխումները, որոնք ուղղված են հանրակրթության որակի և կառավարման արդյունավետության բարձրացմանը: 2006/07 ուստարում հանրապետությունում գործել են հանրակրթական 1426 պետական և 41 ոչ պետական դպրոցներ: Հանրակրթական պետական դպրոցներում սովորել է 458561 աշակերտ և դասավանդել՝ 41979 ուսուցիչ, իսկ ոչ պետական դպրոցներում՝ համապատասխանաբար 6842 և 1134:

Հանրակրթության համակարգի կառավարման գործընթացը բարելավելու նպատակով մշակվել և պետական գրանցում են ստացել տնօրենի ընտրության, նշանակման և ՊՈԱԿ-ի խորհրդի ընտրության կարգերը:

Հայաստանի հանրակրթությունը արտասահմանյան զարգացած երկրների կրթական համակարգերի հետ համադրելի դարձնելու, ինչպես նաև համակարգի նյութատեխնիկական և կադրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ապահովելու նպատակով անցում է կատարվել 12-ամյա հանրակրթության: 12-ամյա հանրակրթության գործունեությունն ապահովելու նպատակով մշակվել և բոլոր դպրոցներում ներդրվել են պետական կրթակարգին և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչն համապատասխան բնագիտական և հասարակագիտական 10 առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր: 2007 թվականին դպրոցներում 12-ամյա ծրագրով ներդրված նոր դասագրքերի թիվը, 2006 թվականին գործածության մեջ մտած դասագրքերի հետ միասին, կազմել է 50

անուն: Մշակվել և փորձնական ներդրման նպատակով հաստատվել են հանրակրթական դպրոցի կերպարվեստ, երաժշտություն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա և ՆՁՊ առարկաների չափորոշիչներն ու ծրագրերի նախագծերը: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչն համապատասխան ներդրվել են նոր՝ «Ես և շրջակա աշխարհը», «Հայրենագիտություն», «Բնագիտություն» և «Հասարակագիտություն» ուսումնական առարկաները:

Կազմակերպվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաներ հանրակրթական 14 առարկաներից: Առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլին մասնակցել է շուրջ 1000 աշակերտ, որոնցից 46-ը՝ պարգևատրվել են 1-ին կարգի դիպլոմով: Մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ինֆորմատիկա, աստղագիտություն և բնագիտություն առարկաների գծով միջազգային օլիմպիադաների մասնակցել է շուրջ 30 աշակերտ:

Ավագ դպրոցների արդյունավետության բարձրացման և որակի էապես բարելավման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել առանձին գործող ավագ դպրոցների համակարգի զարգացման հայեցակարգը և փորձնական ծրագրի առաջարկը:

12-ամյա կրթակարգի ներդրմանը զուգընթաց ՀՀ մարզերում և Երևան քաղաքում շարունակաբար իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ՝ ուսումնական նոր ծրագրերի, չափորոշիչների, գնահատման նոր համակարգի և ուսուցման նոր մեթոդների ուղղությամբ: 2007 թվականին ՀՀ պետբյուջեի շրջանակներում վերապատրաստման երկարատև դասընթացների մասնակցել է շուրջ 8200, իսկ կարճատև դասընթացների՝ 10000 ուսուցիչ, այդ թվում՝ համակարգչային գրագիտության ուղղությամբ՝ 565 ուսուցիչ:

Միաժամանակ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են շուրջ 1000 դասախոս և 25300 ուսուցիչ, իսկ համակարգչային գրագիտության ուղղությամբ՝ 1125 ուսուցիչ: Այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացված վերապատրաստման դասընթացներում հանրապետության տարբեր մարզերից ընդգրկվել են՝ շուրջ 435 դպրոցի տնօրեններ, 450 դասվարներ և նախադպրոցական հաստատությունների 375 մասնագետներ:

Մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչների թվաքանակը 2006/2007 ուստարում կազմել է 87.8%: ՀՀ պետբյուջեի միջոցներով որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը կազմել է մանկավարժական համակազմի շուրջ 19.5%-ը:

Հանրակրթության որակի բարելավման, ինչպես նաև համակարգի առաջանցիկ զարգացման նախապայման է հանդիսանում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներմուծումը հանրակրթական դպրոց և դպրոցների համալրումը ժամանակակից համակարգչային միջոցներով: 2007 թվականին հանրապետության 317 դպրոց համալրվել է համակարգչային սարքավորումներով: Միաժամանակ նախարարության կողմից հաստատված ցանկերում ընդգրկված 82 սոցիալապես անապահով համայքների դպրոցներին համակարգչային սարքավորումներ տրամադրվել են նվիրատվության կարգով: Սպասարկվել է հանրապետության 330 դպրոց ընդգրկող դպրոցների ինտերնետային ցանցը, շահագործվել է «Կրթական միջավայր» ինտերնետային էջը: Ընդունվել են 329 դպրոցների դիմում-հայտեր՝ համակարգչային

սարքավորումներով նշված դպրոցները համալրելու նպատակով: 2006/07 ուստարում հանրապետության տարբեր մարզերի պետական և ոչ պետական դպրոցներում տեղադրված համակարգիչների թիվը կազմել է 5599, կամ 3.8` մեկ դպրոցի հաշվով: Աշակերտների թվաքանակը մեկ համակարգիչի հաշվով կազմել է 83.1, իսկ ինտերնետային ցանցին միացված դպրոցների թիվը կազմել է 282: Հանրապետության 160 դպրոցներում տեղադրվել են 11 առարկաների էլեկտրոնային դասագրքեր:

Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ներդրման հիմնական դերակատարները ուսուցիչներն են: Նախարարությունը, հավատարիմ մնալով որդեգրված ռազմավարությանը, շարունակել է ուսուցիչների սոցիալական դիրքի բարելավման և դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովման քաղաքականությունը:

Մանկավարժների և վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը բարձրացվել է 27 %-ով և համապատասխանաբար կազմել` 74.0 և 76.3

հազարական դրամ: Իսկ ուսումնառության և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը բարձրացվել է 9.8%-ով և կազմել է 23.1 հազ. դրամ:

Նախատեսվում է շարունակել աշխատավարձերի բարձրացումը` մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, 2008 թվականին հասցնելով 90.6 հազ. դրամի:

Միևնույն ժամանակ, միջոցառումներ են ձեռնարկվել մանկավարժների խրախուսման ուղղությամբ: Կազմակերպվել և անց է կացվել ամենամյա` «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները: Հանրապետության շուրջ 45 ուսուցիչներ և 20 տնօրեններ պարգևատրվել են ՀՀ վարչապետի և ՀՀ ԿԳ նախարարության կողմից: Հայ առաքելական եկեղեցու հետ համագործակցությամբ կազմակերպվել և անցկացվել է «Առարկայական լավագույն ուսուցիչ» մրցույթը, որին մասնակից 39 ուսուցիչներ արժանացել են դրամական պարգևի:

2007 թվականի դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 3159 կրճատված ուսուցիչ, որոնցից 2323-ը օգտվել են աջակցության տարբեր ծրագրերից, մասնավորապես` 1731-ը ստացել է լրացուցիչ դրամական վճար, 69-ը` տեղափոխման դրամաշնորհ, 523-ը մասնակցել է մասնագիտական ուսուցման դասընթացների, 28-ը ստացել է հատուկ հոգեբանական խորհրդատվություն:

Շարունակվել են սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրման և մանկավարժների նպատակային պատրաստման ծրագրերը: 2007 թվականի ընթացքում սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի հանրակրթական դպրոցներ գործուղվել են շուրջ 60 մանկավարժական կադրեր, իսկ անհատական ուսուցման գրաֆիկով` շուրջ 20 ուսանող:

Մանկավարժական կադրերի 2007 թվականի նպատակային ընդունելության արդյունքում, մանկավարժական մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի շրջանակներում, բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվել 77 դիմորդներ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների կարևոր խնդիր է կրթության որակի գնահատման և վերահսկման նոր համակարգի ներդրումը: Կրթության որակի

վերահսկման միասնական նոր համակարգի համաձայն, 2007 թվականին «Հայոց լեզու և գրականություն» առարկայից անց է կացվել պետական ավարտական ու միասնական քննություն:

Ներկայումս շարունակվում են ավարտական քննությունների նոր կարգի աստիճանական ներդրման աշխատանքները: Մշակվել և փորձարկման են ներկայացվել «Մաթեմատիկա», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն), «Բնագիտություն» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների քննական թեստերի նմուշօրինակները:

Կրթության ոլորտում միասնական քաղաքականության իրականացման, պետական չափորոշիչների կիրառման վերահսկողության և մշտադիտարկման ապահովմանը նպաստելու, կրթության որակի բարձրացմանն աջակցելու և կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների նկատմամբ պետական և հասարակական վերահսկողություն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ կրթության պետական տեսչության գործունեության հրապարակային հաշվետվությունների մշակման և ներկայացման կարգի» նախագիծը: Տեսչական տուգումներ են կատարվել 42 հանրակրթական, 1 նախադպրոցական և 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Տեսչավորման արդյունքները հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում և նախարարության ինտերնետային կայքում: ՀՀ կրթության պետական տեսչությանը հասցեագրվել են շուրջ 200 դիմում-բողոքներ, որոնց 60%-ը ստացել է դրական լուծում:

Հանրակրթության համակարգի արդյունավետության ապահովման տեսանկյունից հանրակրթական դպրոցներում «աշակերտ/ուսուցիչ» հարաբերակցությունը կազմել է 14.03` 2006թ. 13.8-ի համեմատ, «աշակերտ/ուչ ուսուցիչ» հարաբերակցությունը կազմել է 23.28` 2006թ. 22.73-ի համեմատ, իսկ դասարանների միջին խտությունը 21.77` 2006թ. 22.23-ի դիմաց: Դասարանների միջին խտությունը տարրական դպրոցում կազմել է 21.7, միջին դպրոցում` 25.0, ավագ դպրոցում` 23.7: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 22.0:

2007 թվականին հանրապետության դպրոցներում դասավանդվող դրույքների ընդհանուր թիվը կազմել է 31926.1` 2006թ. 33671.5 դրույքի դիմաց: Դրույքների քանակը նվազել է դասարանների միջին խտության ավելացման հաշվին, որը պայմանավորված է նաև 2006թ. դպրոց հաճախող 12 տարվա ուսուցմամբ առաջին դասարանցիներով:

Կրթության մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից կարևորվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մեջ ներգրավման և որակի բարելավման խնդիրները: Մշակվել են թույլ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման 10 անուն առարկայական ծրագրեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել է նաև

բժշկահոգեբանամանկավարժական գնահատում իրականացնող կենտրոնների ցանկը: Ներկայումս ներառական կրթություն են իրականացնում 14 հանրակրթական դպրոցներ: 2008թ. նախատեսվում է այդ դպրոցների թիվը ավելացնել ևս 15-ով:

Ազգային փոքրամասնությունների կրթական հիմնախնդիրներին աջակցելու նպատակով լրամշակվել է հիմնական դպրոցի եզդիերենի հայեցակարգը և ծրագիրը, աշխատանքներ են տարվել 4-րդ և 5-րդ դասարանների դասագրքերի

ստեղծման ուղղությամբ:

Նախարարության կարևոր խնդիրներից է եղել նաև աշակերտների արտասուսումնական և մարզառազմական դաստիարակությունը: Այս ուղղությամբ կազմակերպվել են սովորողների գեղարվեստական և տեխնիկական ստեղծագործության բազմապիսի ցուցահանդեսներ ու մրցումներ, անցկացվել սպորտ-առողջարարական և մարզառազմական տարաբնույթ միջոցառումներ, որին մասնակցել են շուրջ 202000 դպրոցականներ և 3080 ուսանողներ:

2007 թվականին որակավորվել են հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 1281 զինղեկներ:

Հանրապետության 300 ուսումնական հաստատություններ ապահովվել են ուսումնական զենքով: Ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած մեծ ներդրման համար ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ԿԳ նախարարության կողմից պարգևատրումների են արժանացել շուրջ 80 զինղեկներ և տնօրեններ:

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից շատ կարևոր է դառնում նախադպրոցական կրթությունը: Նախարարության ռազմավարությունը նախադպրոցական կրթության ոլորտում ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մշակվել և ընդունվել են «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք գերատեսչական նորմատիվային ակտեր:

12-ամյա կրթական համակարգին անցնելու կապակցությամբ առավել կարևորվում է 5-6 տարեկան երեխաների դպրոցին նախապատրաստվածության հարցը:

Նախադպրոցական կրթական չափորոշիչների հիման վրա մշակվել է «Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիրը», ինչպես նաև ծրագրից բխող 15 անուն ծրագրամեթոդական ձեռնարկներ և ուղեցույցներ: 2007 թվականին մշակվել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագիրը», որի հիմնական նպատակն է նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման ավելացմանը: Ծրագրի փորձարկումը նախատեսվում է իրականացնել Լոռու և Շիրակի մարզերում, որի արդյունքում նախատեսվում է նախադպրոցական հաստատություններում 6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը Լոռու մարզում՝ 9.4%-ից հասցնել 25%-ի, իսկ Շիրակի մարզում՝ 8.7%-ից 20%-ի:

Նախադպրոցական կրթության ոլորտի զարգացման գործում կարևորվում է նաև մի շարք միջազգային կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:

Մասնագիտական կրթության ոլորտի հիմնախնդիրն է շուկայական տնտեսության պայմաններում մրցունակ մասնագետների պատրաստումը: Ներկայումս միջին մասնագիտական 80 պետական և շուրջ 25 ոչ պետական ուսումնական հաստատություններում սովորում է շուրջ 27500 ուսանող և դասավանդում՝ շուրջ 4000 դասախոս, իսկ 28 արհեստագործական ուսումնարաններում սովորում է շուրջ 7500 ուսանող և դասավանդում շուրջ 500 մանկավարժ ու արտադրական ուսուցման վարպետ:

2006/2007 ուսումնական տարում հանրապետությունում գործել են 23 բարձրագույն պետական ուսումնական հաստատություններ և 10 մասնաճյուղեր, որոնցում սովորել է 81383 ուսանող, նրանցից 61419-ը կամ 75.5%-ը՝ վճարովի ուսուցմամբ:

Ոչ պետական բուհերի թիվը 64 է, որոնցում սովորել է 24447 ուսանող: ՀՀ պետական բուհերում դասավանդողների թիվը կազմել է 7138, այդ թվում՝ 610 գիտության դոկտորներ, 2733 գիտության թեկնածուներ, 659 պրոֆեսորներ, 2089 դոցենտներ:

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում նախարարության քաղաքականությունն ուղղված է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովմանը: Մշակվել և հաստատվել են 23 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչ, ինչպես նաև հանրային սննդի ոլորտի 5 զբաղմունքների վերապատրաստման դասընթացների ծրագրեր և նախնական ու միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը:

2007 թվականին հիմնադրվել է Ամասիայի արհեստագործական ուսումնարանը: Իրականացվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 150 դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման դասընթացներ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնախնդիրը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործումն է, որը կապահովի հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ձեռնարկված բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկը, ինչպես նաև բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելվածը: Գործող մասնագիտությունների ուսումնական պլանները վերակազմվել են մոդուլային սկզբունքով:

Կրեդիտային համակարգի կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել և առանձին գրքույկով հրատարակվել է «Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը»: 2007/2008 ուստարվանից մի շարք պետական բուհերի բակալավրիատում և մագիստրատուրայում կրթության կազմակերպումը իրականացվել է կրեդիտային համակարգի հենքի վրա:

Հրատարակման է նախապատրաստվել «Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի» հայերեն տարբերակը:

2007 թվականին աշխատանքներ են իրականացվել նաև բարձրագույն կրթության ոլորտում՝ որակի ապահովման համակարգի կարիքների գնահատման, որակի հիմնական սահմանումների ձևակերպման, ինչպես նաև որակի ապահովման արտաքին ու ներքին համակարգերի սկզբունքների մշակման ուղղությամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի կարևոր խնդիրներ են նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակապես նոր կադրերի պատրաստումը, բուհերում ներդրվող խոշորացված մասնագիտությունների ցանկի մշակումը, ինչպես նաև բուհերի կառավարման և ֆինանսավորման ինքնավարության ընդլայնման ապահովումը:

Աշխատանքներ են տարվել հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական

հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման, ինչպես նաև այդ բնագավառում տեղ գտած խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ: Իրականացվել են շուրջ 270 ուսումնասիրություններ՝ հաստատությունների կրթական գործունեության լիցենզիայի պայմանների և պահանջների բավարարման ուղղությամբ, որոնցից 183-ը՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այդ թվում 64-ը՝ նախադպրոցական կրթական ծրագրով): Մասնագիտական կրթության ոլորտում, լիցենզավորման և պետական հավատարմագրման ուղղությամբ, բարեփոխումների համատեքստում առավել կարևոր խնդիր է համարվում մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզիայի պայմանների հստակեցումը:

Հայաստանի կրթության համակարգի ինտեգրմանը և զարգացմանը էապես նպաստում են սովորողների և դասախոսների փոխանակման ծրագրերը: 2007թ. միջպետական համաձայնագրերի շրջանակներում նախարարության կողմից բուհական և հետբուհական կրթություն ստանալու նպատակով արտերկրներ են գործուղվել 97 ՀՀ քաղաքացիներ: 2007/08 ուստարում միջպետական համաձայնագրերի և ծրագրերի շրջանակներում ՀՀ պետական բուհեր են ընդունվել և անվճար բարձրագույն կրթություն են ստանում 90 օտարերկրյա քաղաքացիներ: Շուրջ 250 օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթեր ուսումնասիրվել և ուղարկվել են ՀՀ բուհեր՝ նրանց ընդունելությունը կազմակերպելու նպատակով: Ներկայումս ՀՀ բուհերում ուսանում են շուրջ 2200 օտարերկրյա քաղաքացիներ: Հանրապետությունում լեզվի բնագավառում միասնական քաղաքականության իրականացման, գրական հայերենի կանոնակարգման և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրա լիակատար գործածության ապահովման նպատակով իրականացվել են մի շարք տեսչական շրջայցեր: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է 31 ստուգում, որի արդյունքում վարչական պատասխանատվության է ենթարկվել 10-ը:

Գիտության ոլորտում նախարարության քաղաքականությունն ուղղված է գիտության ֆինանսավորման ծավալների ավելացմանը, ֆինանսավորման արդյունավետության և գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, գիտական ներուժի վերարտադրության ապահովմանը, գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունների հստակեցմանը:

2007 թվականին պետական բյուջեից ֆինանսավորվել են 914 գիտական ծրագրեր և թեմաներ՝ 58352.0 մլն դրամ ծավալով, մասնավորապես՝

-գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում՝ 150 ծրագիր, 3521.3 մլն դրամ,

-գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում՝ 759 թեմա, 1340.9 մլն դրամ,

-գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորում՝ 5 ծրագիր, 833.0 մլն դրամ:

Գիտության համակարգի զարգացումն ապահովելու նպատակով լրամշակվել է Հայաստանի Հանրապետություն գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը: Համաձայն հայեցակարգի, 2007 թվականին նախարարության համակարգում ստեղծվել է Գիտության պետական կոմիտեն, որն ստանձնելու է գիտության ոլորտի

բարեփոխումներին ուղղված միջոցառումների իրականացման գործընթացը: 2007 թվականին լրամշակվել են գիտական աստիճանաշնորհման և կոչումաշնորհման անվանացանկերը, ինչպես նաև որակավորման քննությունների ծրագրերը: Գիտական աստիճանի վկայագիր տրվել է 530 գիտնականի (այդ թվում՝ 52 գիտության դոկտորի), իսկ օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի համապատասխանեցման հավաստագիր՝ 30 գիտնականի (այդ թվում՝ 7 դոկտորի): Գիտական կոչման վկայագիր տրվել է 341 գիտնականի (այդ թվում՝ 71 պրոֆեսորի և 270 դոցենտի):

Կրթության ոլորտում մեծ կարևորություն ունի նաև համագործակցությունը արտերկրում՝ հայապահպանության խնդրի տեսանկյունից: Իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում, որին մասնակցել են 27 ուսուցիչներ՝ 11 երկրներից: 2007 թվականին կազմակերպվել է հայոց լեզվի և գրականության համահայկական երրորդ օլիմպիադան և նրա շրջանակներում անցկացվող՝ Հայագիտական գիտելիքների մրցույթ, որին մասնակցել են 106 պատանիներ՝ 11 երկրներից:

2007 թվականին ՀՀ պետական բուհերում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և ասպիրանտուրայում ուսանելու համար ընդունվել են 453 դիմորդների փաստաթղթեր: Ներկայումս հանրապետության մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում են ավելի քան 3200 սփյուռքահայ երիտասարդներ: Շարունակվել է արտերկրի հայկական կրթօջախներին դասագրքեր և ուսումնական նյութեր տրամադրելու գործընթացը:

Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես՝ 2007 թվականին կրթության ոլորտի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.82%, 2006 թվականի՝ 2.53%-ի դիմաց: 2007 թվականին պետական բյուջեից կրթության և գիտության բնագավառներին հատկացվել է 91775.95 մլն դրամ, որը կազմում է պետական ծախսերի 16.4%-ը:

Նախարարությունը կարևորել է գործունեության թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ապահովումը և քաղաքացիական հասարակության մասնակցությունը: 2007 թվականին նախարարությունում շարունակել է գործել «Թեժ գիծ» հեռախոսակապը, որի միջոցով քաղաքացիներին հուզող հարցերին տրվել են պարզաբանումներ: Բարձրացված հարցերը հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում: Պարբերաբար կազմակերպվել են մամուլի ասուլիսներ ինչպես նախարարության տարբեր ստորաբաժանումների գործունեության, այնպես էլ ոլորտում իրականացվող գործընթացների և առկա հիմնախնդիրների վերաբերյալ: 2007 թվականին շահագործվել և նորացվել է նախարարության ինտերնետային կայքը, որտեղ գետեղված են ոլորտին վերաբերող իրավական փաստաթղթեր, իրականացվող գործընթացներին առնչվող տեղեկատվություն: Տարածվել են հանրության լայն շերտերին հետաքրքրող տեղեկություններ՝ մամուլի հաղորդագրությունների, նախարարության ինտերնետային կայքի և ՋԼՄ-ներում առկա թեմատիկ հաղորդաշարերի միջոցով: 2007 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով նախատեսված 32 միջոցառումներից 22-ը կատարվել է ժամանակին, 1-ը՝ ուշացումով, 1-ը՝ հետաձգվել և 8 -ը՝ հանվել:

2008 թվականի համար սահմանվել են հետևյալ գերակա խնդիրները և դրանց իրականացման միջոցառումները՝

1.Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում`

-նախադպրոցական կրթության 2008-2015թթ. ռազմավարության ներդրման և փորձնական ծրագրի իրականացում:

2.Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ`

-12-ամյա կրթության ուսումնական պլանի, առարկայական նոր ծրագրերի և չափորոշիչների մշակում, մեթոդական նյութերի պատրաստում և տպագրում,

-ուսուցիչների վերապատրաստում համաձայն նոր ծրագրերի,

-առանձին գործող ավագ դպրոցների փորձնական ծրագրի իրականացում,

-անցում ամփոփիչ և ընթացիկ գնահատման նոր համակարգի,

-հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում:

3.Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացում`

-նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում,

-մանկավարժական կադրերի վերապատրաստում,

-մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մեխանիզմների մշակում:

4.Բարձրագույն կրթության բարեփոխումները` ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների`

-բարձրագույն մասնագիտական կրթության կրեդիտային համակարգին

համապատասխան պետական կրթական չափորոշիչների մշակում, հաստատում և ներդրում,

-համընթեռնելի և համատեղելի բարձրագույն կրթության փաստաթղթերի ներդրում,

-մասնագիտական և ակադեմիական աստիճանների որակավորման համակարգի ներմուծում` համադրելիության ապահովման նպատակով,

-որակավորումների ազգային համակարգի ստեղծում: